

5.3. 2009թ. փետրվար ամսվա հիդրոոդերևութաբանական վիճակը Հայաստանում

Ըստ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի պետական ծառայության տեղեկատվության, փետրվարին օդի միջին ամսական ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում եղել է նորմայից բարձր 3.5-4.5 աստիճանով:

Միջին տասնօրյակային ջերմաստիճանն առաջին և երկրորդ տասնօրյակներում եղել է նորմայից բարձր 4-5, երրորդ տասնօրյակում՝ 1-3 աստիճանով:

Միջին առավելագույն ջերմաստիճանը Սյունիքի հովիտներում կազմել է +13 +14°C, ՀՀ Տավուշի մարզում՝ +10 +11°C, Արարատյան դաշտավայրում՝ +9 +10°C, Սյունիքի նախալեռներում՝ +7 +10°C, ՀՀ Լոռու մարզում՝ +5 +8°C, լեռնային շրջաններում 0 +3°C:

Ամենաբարձր ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում դիտվել է փետրվարի 13-16-ին, երբ միջին օրական ջերմաստիճանը նորմայից բարձր է եղել 5-9 աստիճանով: Սյունիքի հովիտներում գրանցվել է +18 +20°C, ՀՀ Տավուշի մարզում՝ +17 +19°C, Սյունիքի նախալեռներում՝ +14 +16°C, Արարատյան դաշտավայրում՝ +15 +17°C, ՀՀ Լոռու մարզում՝ +12 +15°C, լեռնային շրջաններում՝ +4 +6°C:

Միջին նվազագույն ջերմաստիճանը լեռնային շրջաններում կազմել է -5 -8°C (Մասրիկ գյուղում (ՀՀ Արարատի մարզ)՝ -10°C), ՀՀ Լոռու մարզում՝ -5°C, Սյունիքի նախալեռներում՝ 0 -2°C, ՀՀ Տավուշի մարզում՝ -2 +1°C, Արարատյան դաշտավայրում՝ -0.5 -1°C, Սյունիքի հովիտներում՝ +1 +4°C:

Ամենացածր ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում դիտվել է փետրվարի 18-20-ին, միջին օրական ջերմաստիճանը նորմայից ցածր է եղել 1-4 աստիճանով: Լեռնային շրջաններում գրանցվել է -12 -17°C (Աշոցք գյուղում (ՀՀ Շիրակի մարզ)՝ -27°C, Ամասիա գյուղում (ՀՀ Շիրակի մարզ)՝ -19°C), ՀՀ Լոռու մարզում՝ -8 -15°C, ՀՀ Տավուշի մարզում՝ -4 -9°C, Արարատյան դաշտավայրում և Սյունիքի նախալեռներում՝ -2 -7°C (ք.Սիսիանում (ՀՀ Սյունիքի մարզ)՝ -13°C), Սյունիքի հովիտներում՝ -3 +1°C:

Փետրվար ամսվա ընթացքում հանրապետության տարածաշրջանների մեծ մասում տեղումների քանակը եղել է նորմայից ցածր և նորմային մոտ: Արարատյան դաշտավայրում և ՀՀ Լոռու մարզում այն կազմել է նորմայի 80-95%-ը (ք.Արտաշատում (ՀՀ Արարատի մարզ) և ք.Վանաձորում (ՀՀ Լոռու մարզ)՝ 150%), լեռնային շրջաններում, ՀՀ Տավուշի մարզում և Սյունիքի նախալեռներում՝ 50-80% (ք.Ապարանում (ՀՀ Արագածոտնի մարզ)՝ 126%), Սյունիքի հովիտներում՝ 5-10%:

Փետրվարի 2-ին ամենուրեք դիտվել է ձյուն, իսկ 7-ին, 9-11-ին, 17-ին, 21-22-ին և 27-28-ին ՀՀ Տավուշի և Սյունիքի մարզերի հովտային շրջաններում, Արարատյան դաշտավայրում դիտվել է անձրև:

Արարատյան դաշտավայրում, ՀՀ Լոռու, Տավուշի, Շիրակի մարզերում և ք.Սիսիանում ժամանակ առ ժամանակ դիտվել է մառախուղ 30-800 մ տեսանելիությամբ: Առանձին շրջաններում փետրվարի 5-ին, 8-10-ին, 12-13-ին, 16-17-ին և 21-ին դիտվել է քամու ուժգնացում, արագությունը՝ 5-18 մ/վրկ, պոռթկումները՝ 15-26 մ/վրկ: Փետրվարի 22-ին Աշոցք գյուղում դիտվել է բուք, քամու արագությունը՝ 20 մ/վրկ, պոռթկումները՝ 22 մ/վրկ:

Չյան ծածկույթի բարձրությունը փետրվարի 28-ի դրությամբ Արագած բարձր լեռնային կայանում կազմել է 158 սմ, լեռնային և նախալեռնային շրջաններում՝ 5-35 սմ (ք.Ջերմուկում (ՀՀ Վայոց ձորի մարզ)՝ 71 սմ, ք.Ապարանում՝ 46 սմ, Աշոցք գյուղում՝ 44 սմ,

ք.Հրազդանում (ՀՀ Կոտայքի մարզ)՝ 42 սմ), Արարատյան դաշտավայրում և ՀՀ Սյունիքի մարզում ձյան ծածկույթը բացակայել է:

Փետրվարին հանրապետության գետերում միջին ամսական ելքերը կազմել են նորմաների 80-90%-ը:

Սևանա լճի մակարդակը փետրվար ամսվա ընթացքում բարձրացել է 1 սմ-ով և 2009թ. փետրվարի 28-ի դրությամբ կազմել 1898.86 մ, որը 2008թ. նույն օրվա համեմատ բարձր է 5 սմ-ով: